ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Ռուզաննա Պեպանյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության զբաղվածության բաժնի պետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 2026 թվականի մարտի 10-ից մինչև մարտի 13-ը

3. **Հրավիրող կողմը.**

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) Պրահայի գործընթացի քարտուղարությունը

4. **Գործուղման նպատակը**.

«Աշխատանքային միգրացիայի և շարժունակության հասցեագրումը՝ աշխատանքային միգրացիայի վրա հատուկ շեշտադրմամբ» թեմատիկ բաղադրիչ 3-ի շրջանակներում Աշխատանքային միգրացիայի թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Աշխատաժողովի նպատակն էր աշխատանքային միգրացիայի ոլորտում քաղաքականությունների, գործիքների և փորձի փոխանակումը Եվրոպական միության անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև:

Աշխատաժողովը միտված էր՝

- գնահատելու աշխատանքային միգրացիայի դերը աշխատաշուկաների զարգացման գործում,
- քննարկելու օրինական միգրացիայի և մասնագիտական շարժունակության հնարավորությունները,
- խթանելու արդյունավետ և կայուն համագործակցությունը մասնակից երկրների միջև:

Քննարկումներն ընդգրկել են լայն շրջանակ՝

- ԵՄ աշխատանքային միգրացիայի քաղաքականության զարգացումը և նոր նախաձեռնությունները (օր.՝ EU Talent Pool, Visa Strategy),
- Աշխատուժի պակասի խնդիրները Եվրոպայում և դրա լուծման ուղիները,

- Աշխատանքային միգրացիայի կառավարման մոդելներ (քվոտաներ, գործատուի վրա հիմնված համակարգեր, միասնական թույլտվություններ),
- Թվայնացում և վարչական ընթացակարգերի պարզեցում,
- Միգրանտների ինտեգրում և լեզվական/մասնագիտական պատրաստվածություն,
- Որակավորումների ճանաչման խնդիրներ և հնարավոր լուծումներ,
- Աշխատանքային միգրացիայի համագործակցության նոր գործիքներ (Skills Mobility Partnerships):

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ընթացքում տեղի են ունեցել ելույթներ և թեմատիկ քննարկումներ: Ելույթներում ընդգծվել է, որ աշխատանքային միգրացիան հանդիսանում է կարևոր գործիք աշխատուժի պակասի հաղթահարման, հմտությունների փոխանակման, տնտեսական զարգացման խթանման համար:

Քննարկումների ընթացքում բարձրացվել են հետևյալ հիմնական հարցերը՝

- վարչական գործընթացների արդյունավետության բարձրացում,
- միգրանտների ինտեգրման բարելավում,
- որակավորումների ճանաչման գործընթացների պարզեցում,
- ապօրինի միգրացիայի կանխարգելում:

Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցչի կողմից ներկայացվել է ԵՄ աշխատանքային միգրացիայի ոլորտի վերջին զարգացումները: Նշվել է, որ ընդունվել է ԵՄ վիզային ռազմավարությունը և մշակվել են առաջարկություններ՝ տաղանդների ներգրավման և նորարարության խթանման ուղղությամբ: Առաջնահերթություններից է վիզաների և աշխատանքային միգրացիայի ընթացակարգերի պարզեցումն ու արագացումը՝ թվայնացման, փաստաթղթաշրջանառության կրճատման և կառույցների միջև համագործակցության ուժեղացման միջոցով: Նպատակն է բարձրացնել ԵՄ գրավչությունը ուսանողների, մասնագետների և նորարար ձեռնարկությունների համար:

Ներկայացվել է նաև ԵՄ Տաղանդների հարթակի (EU Talent Pool) ստեղծման գործընթացը, որը նախատեսված է որպես միջազգային հավաքագրման գործիք՝ կապելով գործատուներին և աշխատանք փնտրողներին:

Բացի այդ, զարգացվում է համագործակցությունը գործընկեր երկրների հետ: Նշվել է Հնդկաստանում EU Legal Gateway նախաձեռնության մեկնարկի մասի, որը նպատակ ունի խթանել մասնագիտական շարժունակությունը, մասնավորապես ՏՀՏ ոլորտում:

Ընդգծվել է նաև մասնավոր հատվածի հետ համագործակցության կարևորությունը և Տաղանդների գործընկերությունների զարգացման անհրաժեշտությունը:

Պրահայի գործընթացի քարտուղարությունը ներկայացրել է իրականացվող գործունեության ընդհանուր պատկերը, ներառյալ 2027 թվականի հունվարին Վիլնյուսում նախատեսվող 5-րդ նախարարական համաժողովի նախապատրաստական աշխատանքները և նախարարական փաստաթղթերի շուրջ առաջիկա պետական խորհրդակցությունները:

Նշվել է, որ 2026 թվականի ապրիլի 22-ին նախատեսվում է թեմատիկ քննարկում՝ նվիրված աշխատանքային միգրացիային և ինտեգրմանը: Գործող գործողությունների ծրագիրը շարունակում է մնալ ուժի մեջ, միաժամանակ երկրներին հրավիրվել է ներկայացնել առաջարկություններ հաջորդ ժամանակահատվածի համար: Նախատեսվում է նաև բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումների անցկացում հունիսին և նոյեմբերին՝ վերջնական ձևակերպումները համաձայնեցնելու նպատակով: Ընդգծվել է, որ աշխատանքային միգրացիան հանդիսանում է նաև ICMPD-ի 2030 թվականի ռազմավարության երեք հիմնական առաջնահերթություններից մեկը:

ICMPD (MPF) փորձագետները ներկայացրել են ԵՄ աշխատանքային միգրացիայի քաղաքականության ընդհանուր պատկերը: Ներկայացման ընթացքում ընդգծվել է ԵՄ-ի և անդամ պետությունների միջև լիազորությունների բաժանումը, ինչպես նաև տնտեսական պահանջների և միգրացիայի վերահսկման միջև հավասարակշռության անհրաժեշտությունը:

Ներկայացվել են աշխատանքային միգրացիայի մասով աջակցության ԵՄ գործիքներն, այդ թվում՝ նոր Միգրացիայի և ապաստանի մասին դաշնագրի շրջանակում իրականացվող զարգացումները:

Աշխատաժողովի ընթացքում մասնակից բոլոր երկրների ներկայացուցիչները, այդ թվում նաև մենք ներկայացրել ենք միգրացիայի ոլորտի ազգային քաղաքականության վերջին բարեփոխումները և իրականացվող ծրագրերը: Ներկայացվել են նաև առաջարկություններ Պրագային գործընթացից ակնկալիքների, ինչպես նաև համագործակցության ու աջակցության մեխանիզմների վերաբերյալ:

Վերը նշվածից բացի տեղի ունեցան նաև խմբային քննարկումներ, մասնավորապես մասնակցել եմ աշխատուժի հավաքագրման, աշխատողների պաշտպանության թեմայով քննարկմանը, որի ընթացքում դիտարկվել են նաև աշխատուժի հավաքագրման տարբեր մեխանիզմներ, ներառյալ՝ գործատուների կողմից ծագման երկրներում գործակալությունների ներգրավումը, ոչ պաշտոնական հավաքագրումը անձնական կապերի միջոցով, ինչպես նաև աշխատողների ինքնուրույն կազմակերպված տեղափոխումը:

Նշվել են մի շարք հիմնական մարտահրավերներ, այդ թվում՝ աշխատողների երկրորդային տեղաշարժերը և ծագման երկրներում գործող գործակալությունների վերահսկման բարդությունները:

Հատուկ ընդգծվել է վերահսկողության և աշխատողների պաշտպանության կարևորությունը, հատկապես տնային և սեզոնային աշխատանքների ոլորտներում, որոնք դժվար են վերահսկման տեսանկյունից:

Նշվել է, որ որոշ աշխատողներ մուտք են գործում զբոսաշրջային վիզաներով և հետագայում աշխատում են առանց համապատասխան թույլտվությունների՝ մասնավորապես ագրոտուրիզմի և հյուրընկալության ոլորտներում:

Կարևորվել է նաև ուղարկող երկրներում հյուպատոսական հարցազրույցների անցկացումը և աշխատողների համար հստակ տեղեկատվության տրամադրումը:

Որպես հաջողված փորձ ներկայացվել է Ֆիլիպինների մոդելը, որտեղ աշխատում են աշխատանքային կցորդներ (labour attachés), որոնք աջակցում են արտերկրում աշխատող քաղաքացիներին և ապահովում նրանց իրավունքների պաշտպանությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ժամանակ որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով աշխատաժողովի ընթացքում տեղի ունեցած քննարկումների արդյունքները՝ միջազգային փորձի խորքային ուսումնասիրմամբ կարևոր է.

- ձևավորել աշխատաշուկայի պահանջների վրա հիմնված աշխատանքային միգրացիայի կանոնակարգման քաղաքականություն՝ առաջնահերթ ոլորտների հստակեցմամբ, ինչպես նաև ԵՄ կողմից առաջարկվող գործիքների կիրառմամբ:
- մշակել և ներդնել աշխատանքային միգրանտների ինտեգրման թիրախային ծրագրեր (լեզվի, մասնագիտական հմտությունների զարգացում, սոցիալական աջակցություն),
- միջոցներ ձեռնարկել աշխատուժի հավաքագրման մասնավոր գործակալությունների գործունեությունը վերահսկելի դարձնելու ուղղությամբ,
- միջոցներ ձեռնարկել աշխատանքային միգրանտներ ընդունող երկրներում աշխատանքային կցորդների ինստիտուտի ներդրման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

_____ **Ռ. Պեպանյան**

18.03.2026 թ.